ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Հակոբյան,

Հայտնում եմ Ձեզ, որ 2025 թ. սեպտեմբերի 18-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 18-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

1. Մասնակցել և իրականացրել եմ պլանային ստուգումներ՝ Երևանի տարածքում գտնվող 8 մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ – ներում և իրացման կետում, որի շրջանակներում ուսումնասիրել եմ ստուգման իրականացման համար պահանջվող փաստաթղթային փաթեթը, պարզաբանել և արձանագրել եմ մի շարք խախտումներ, որի արդյունքում խմբի ղեկավարի հետ կազմել եմ ստուգման ակտի նախագիծ, ստուգման ակտ և վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն,

2. Հայաստանի Հանրապետությունից անասնաբուժական հսկողության ենթակա բեռների, սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի, սննդային և կենսաբանական ակտիվ հավելումների արտահանման նպատակով իմ կողմից կազմվել և տրամադրվել է 30 տնտեսավարող սուբյեկտի համապատասխանության տեղեկանք՝ ձև 8,

3. Անմիջական ղեկավարի հանձնարարությամբ կազմել եմ լաբորատոր փորձարկման արձանագրությունների ցանկ՝ Սևանա լճում 2025 թվականի նոյեմբերի 21-ից մինչև 2026 թվականի փետրվարի 1-ը սիգի ձվադրման ժամանակահատվածում իրականացվող համատեղ միջոցառումների շրջանակներում առգրավված սիգի վերաբերյալ (թվով 15 փորձարկման արձանագրություն),

4. Եռամսյակի ընթացքում անմիջական ղեկավարի հանձնարարությամբ մասնակցել և իրականացրել եմ Երևանի կենտրոնի կանոնադրությունից բխող աշխատանքներ,

5. Ակտիվ մասնակցություն եմ ցուցաբերել գործընկերներիս հետ մասնագիտական քննարկումներին՝ ուղղված սննդամթերքի անվտանգության ապահովման, վերահսկողության ուժեղացման և բնակչությանը մատուցվող սննդամթերքի որակի բարձրացման վերաբերյալ:

ՍԱՏՄ ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ
ՓՈՐՁԱԳԵՏ ԿԱՐԻՆԵ ԱՐՍԵՆՅԱՆ

19.12.2025